# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 6

ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել համայնքի 2018 թվականի բյուջեի նախագիծը՝
ա) եկամուտների գծով-301719,2 հազար դրամ
բ) ծախսերի գծով- 301719,2 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 7

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈւՄ Է՝

Սահմանել՝

*1.Տեղական տուրքեր՝*

ա/ համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչհիմնական/ շինարարություն /տեղադրման/ թույլտվության համար

այդ թվում

ա/ հիմնական շինությունների համար

- մինչև 300 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև 200 ք.մ. ընդհանուրմակերես ունեցող ևհասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար - 10.0 հազար դրամ.

այդթվում՝

201-ից մինչև 500ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15.0 հազար դրամ

501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25.0 հազար դրամ

1001 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -35.0 հազար դրամ

աբ/ ոչ հիմնական շինությունների համար

- մինչև 20.0 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 2.0 հազար դրամ
- 20 և ավելիք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 3.0 հազար դրամ

բ/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման

աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահնջվող դեպքերի /կատարելու թույլտվության համար - 3.0 հազար դրամ
գ/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար - 5.0 հազար դրամ
դ/ Համայնքի տարածքում ոգելից խմիչքներին /կամ/ ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա համար վաճառքի թույլտվության համար -
այդ թվում՝
հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 5 հազար դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար.
ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 4.5 հազար դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար
ե/ Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար
այդ թվում - գազի և վառելիքաքսայուղային նյութերի ընթացիկ տարվա համար - 100.000 /հարյուր հազար/ դրամ
- գյուղատնտեսական մթերքների յուրաքանչյուր օրվա համար - 150 դրամ
- այլ ապրանքների /այդ թվում՝ոգելից խմիչքների և /կամ ծխախոտի արտադրանքի համար- յուրաքանչյուր եռամսյակի համար 9000 դրամ.
զ/ Համայնքի տարածքում խաղատների, հանրային սննդի օբյեկտների, բաղնիքների /սաունաների/, զվարճանքի օբյեկտների՝ ժամը 24-⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար
այդ թվում՝
- խաղատների համար - 500000 դրամ
- շահումներով խաղերի կազմակերպման համար - 250000 դրամ
- հանրային սննդի օբյեկտների համար - 50000 հազար դրամ
- բաղնիքների /սաունաների/ համար - 200000 դրամ
է/ Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքներ իտարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտության համար
ը/ Համայնքի տարածքում յուրքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել.
- ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսարտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2000 դրամ
- այլարտաքին գովազդի յուրաքանչյուր ամսվա համար - 1500 դրամ /1 քմ./
- դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր ամսվա համար - 0.700 դրամ
թ/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար - 0.300 դրամ
ժ/ Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար 5.0 հազար դրամ.
ի/ Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար 50.000 դրամ

*Տեղական վճարներ*

ա/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանք ներկատարելու հետ կապված տեխնիկատնտեսական

պայմաններ մշակելու և հաստատելու համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 3000 դրամ.

բ/ Համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար 7000 դրամ.

գ/ Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար - 1500 դրամ

դ/ Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գումար - 1000 դրամ:

ե/ Աղբահանության վճարը յուրաքանչյուր ֆիզիկական անձի համար ամիսը-100 դրամ:

զ/առևտրի (այդ թվում` շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մաով մեկ քառաուսի մետրմակերոսի համար` 50-ից 100 դրամ:

է/ հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացվող հասարակական շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար` 20-ից 50 դրամ:

ը/արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար ` 5-ից 15 դրամ:

թ/կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շիննությունների մասով` մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3-ից 15 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ
3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ
4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ
5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ
7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՒՐԻԿ
9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ
10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 8

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի աշխատակազմի ենթակա կառույցների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝համաձայն հավելվածների:

Ավագանու անդամներ՝
Վ. Բաբայան, Մ. Խոնդկարյան, Թ. Դումանյան, Ն. Մելքումյան, Մ. Հայրապետյան, Վ. Սարիբեկյան

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 9

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1-ին հոդվածի1-ին և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 10.2-րդ կետը, 33.1-ին հոդվածը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝
1. ՁԵՎԱՎՈՐԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
Դրանք են՝
1) Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ.
2) քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ.
3) կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի,սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ.
նախագահ՝ Վազգեն Ադամյան-համայնքի ղեկավար
քարտուղար՝ Ֆլորա Սարգսյան-աշխատակազմի քարտուղար
2.Հաստատել՝
ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՄ-Ի ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄԸ՝
1)Ռոբերտ Օհանյան-համայնքի ղեկավարի տեղակալ
2)Թարխան Խեչոյան- աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
3)Ռոբերտ Ղուկասյան- համայնքի ղեկավարի օգնական
4)Հակոբ Մարտիրոսյան-աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
5)Լուսինե Մարկոսյան- աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
6)Վիգեն Սահակյան-Թթուջուր բնակավայրի վարչական ղեկավար
7) Մխիթար Կարապետյան-Այգուտ բնակավայրի վարչական ղեկավար
8) Վախթանգ Բաբայան -ավագանու անդամ
9) Մխիթար Հայրապետյան -ավագանու անդամ
3. Հաստատել՝
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԽՄ-Ի ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄԸ՝
1)Սերյոժա Ավալյան-ղեկավարի խորհրդական
2)Վրեժ Դանիելյան-աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ
3)Արշակ Թուխտարյան-աշխատակազմի քաղաքաշինությաքն բաժնի առաջատար մասնագետ
4)Մակիչ Խոնդկարյան-ավագանու անդամ
5)Սարգիս Այունց-Գետիկ բնակավայրի վարչական ղեկավար
6)Նորայր Մելքումյան-ավագանու անդամ
7)Սամվել Ծատուրյան-Կալավան բնակավայրի վարչական ղեկավար
4.Հաստատել՝
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐՑԵՐԻ ԽՄ-Ի ԿԱԶՄԸ՝
1) Կարեն Բալյան- աշխատակազմի գլխավոր մասնագետ
2) Վարդան Սարիբեկյան-ավագանու անդամ
3) Գյուլնարա Մելքումյան-Կենտրոնական գրադարանի տնօրեն
5)Հարություն Համազասպյան-ավագանու անդամ
6)Կառլեն Ուլումյան-մանկաբույժ
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ
3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ
4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ
5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ
7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ
8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ
9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ
10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 10

### ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ձևավորել Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ-Վազգեն Ադամյան համայնքի ղեկավար
անդամներ՝ Մակիչ Խոնդկարյան-ավագանու անդամ
Վախթանգ Բաբայան-ավագանու անդամ
Թաթուլ Դումանյան-ավագանու անդամ
Միշա Ղուկասյան-ավագանու անդամ
Զուրիկ Մարտիրոսյան-ավագանու անդամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 11

### ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավար առաջարկությունը համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝
1.Ձևավորել համայնքի ավագանու անդամներից՝դրամական աջակցության հանձնաժողով հետևյալ կազմով՝
1)Ռոբերտ Օհանյան-համայնքի ղեկավարի տեղակալ
2)Վախթանգ Բաբայան-ավագանու անդամ
3)Ֆլորա Սարգսյան-աշխատակազմի քարտուղար
4)Լուսինե Մարկոսյան-ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
5)Սերյոժա Ավալյան- համայնքի ղեկավար խորհրդական
2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 12

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-061-0109-0065 ԾԱԾԿԱԳՐՈՎ 200ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով ՀՀ Կառավարության 26.05.2006թ. N 999-Ն որոշումով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Յուքոմ» ՍՊԸ տնօրեն Հայկ Եսայանի գրությունը՝ Ձորավանք բնակավայրին հարակից բջջային կապի կայան տեղակայելու մասին, համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնություն տալ՝ Ճամբարակ համայնքի Ձորավանք բնակավայրին հարակից գտնվող 05-061-0109-0065 ծածկագրով 200 քմ մակերեսով գյուղնշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխելու էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 13

### «ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ 13.10.2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Մանուկյանի թիվ 1.3/18-3/52606-17 12.12.2017թ. գրությունը համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ լուծելու «ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և Ճամբարակ համայնքի մինչև 13.10.2015 թվականին կնքված անշարժ գույքի՝համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկի ձախակողմյան հատվածի 30.1 քմ. մակերեսով տարածքի, վարձակալության պայմանագիրը։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, 026522255, 026523133, 026561525,
chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 14

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՈՅԻ 8/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՄՈՒԺԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով ՀՀ Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ՝ Ճամբարակ համայնքի Լեոյի 8/8 հասցեում գտնվող Արթուր Մուժիկյանի կողմից ինքնակամ կառուցված և որպես համայնքայի սեփականություն գրանցված ավտոտնակը ուղղակի վաճառքով տրամադրել Արթուր Մուժիկյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ

3. ԴՈՒՄԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

4. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

5. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԽԻԹԱՐ

7. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

9. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՆՈՐԱՅՐ

10. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**Համայնքի ղեկավար՝ ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**